



ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Մի կողմից՝ Հայաստանի Լոռու մարզի **Ստեփանավանի քաղաքապետարանը**, ի դեմս՝ քաղաքապետ պարոն Միքայել Ղարաքեշիշյանի,

Ինչպես նաև **Դեսինի քույր-քաղաքների կոմիտեն** (Ֆրանսիա, Ռոնի վարչական շրջան), ի դեմս՝ նախագահ տիկին Աննա Ժամբոնի,

Եվ

Մյուս կողմից՝ **դասավանդողներ առանց սահմանների խմբավորման** /այսուհետ՝ «GREF»-/
միջազգային համերաշխության ասոցիացիան, ի դեմս՝ վերջինիս նախագահ Ժան-Պիեր
Կուվելիերի,

պայմանավորվեցին հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1 - Համաձայնագրի թեման

Ստեփանավանում և շրջակա քաղաքներում ֆրանսերեն լեզվի և ֆրանսիական մշակույթի
իմացությունը պետք է նպաստի Ստեփանավան և Դեսին քաղաքների միջև կապերի
զարգացմանը:

Այս շրջանակներում «GREF»-ն առաջարկում է իր աջակցությունը Ստեփանավանի
քաղաքապետարանին հետևյալ նպատակներով.

- Նպաստել ֆրանսերեն դասավանդողների շարունակական վերապատրաստմանը, որպեսզի բարելավեն ֆրանսերենի իրենց իմացությունը և մանկավարժական ակտիվ մեթոդները,
- Զարգացնել հայ-ֆրանսիական միջմշակութային տեսլականը, որտեղ Ստեփանավանի և շրջակա տարածքների ժառանգությունը կաջակցի ֆրանկոֆոն կրթական գործունեությանը:

ՀՈԴՎԱԾ 2 - Իրականացման կարգը

Եռամյա ծրագիր՝ 2017-2020թթ.

Հինգ շաբաթյա դասընթաց՝ տարին մեկ անգամ:

Յուրաքանչյուր դասընթացին՝ «GREF» կազմակերպությունից 2 կամավոր:

Յուրաքանչյուր դասընթաց կազմակերպվում է որպես մեկ միջոցառում, որը թույլ է տալիս միավորել տեղական ակտիվ ուժերի՝ ավելի լայն քան դպրոցը (օրինակ՝ արվեստի և երաժշտական դպրոցներ, գրադարան, թանգարան, արշավներ, մշակույթի տուն, ինչպես նաև ցանկացած շահագրգիռ անձ կամ ասոցիացիայ):

«GREF»-ի կամավորները կմասնակցեն դպրոցներում ընթացող ուսուցմանը՝ որպես համադասավանդողներ և կկազմակերպեն մանկավարժական ժողովներ:

Այս կարգը կարող է փոփոխվել՝ հաշվի առնելով կարիքները և սահմանափակումները, հատկապես՝ ֆինանսական:

ՀՈԴՎԱԾ 3 - Դասավանդողների ներգրավվածությունը

Ստեփանավանի եւ նրա շրջակա քաղաքների ֆրանսերեն լեզվի դասավանդողները պարտավորվում են մասնակցել բոլոր դասընթացներին՝ իրենց դպրոցների տնօրինությունների համաձայնությամբ:

ՀՈԴՎԱԾ 4 - “GREF”- ի ներգրավվածությունը

“GREF”-ը պարտավորվում է հայթայթել անհրաժեշտ լրացուցիչ ֆինանսական միջոցներ ծրագրի իրականացման համար և ներկայացնել իրավասու մասնակիցներին:

ՀՈԴՎԱԾ 5 - Ստեփանավանի քաղաքապետարանի ներգրավվածությունը

“GREF”-ի կամավորներին անվճար կտրամադրվեն առանձին կացարան՝ թույլ տալով ունենալ ինքնուրույն անձնական կյանք:

Քաղաքապետարանը կոյուրացնի ֆեդերատիվ միջոցառումների կազմակերպումը, ի թիվս այլոց՝ մասնակցելով աշակերտների տեղափոխմանը:

ՀՈԴՎԱԾ 6 - Դեսին և Ստեփանավան քույր-քաղաքների կոմիտեի ներգրավվածությունը

- Ստեփանավանում՝

Քույր քաղաքների կոմիտեն կնշանակի մի ֆրանսախոս համապատասխան անձի՝ որպես “GREF”-ի հետ ուղիղ կապի պատասխանատու: Վերջինս կապահովի դասընթացների ընթացքում և միջև հաղորդակցությունը:

- Դեսինում՝

Քույր քաղաքների կոմիտեն տարեկան 1600 եվրո կտրամադրի «GREF»-ին այդ ծրագիրն իրականացնելու նպատակով և կմասնակցի Ստեփանավանում միջոցառումների կազմակերպմանն ուղղված նյութական ծախսերին:

ՀՈԴՎԱԾ 7 – Ծրագրի գնահատումը

«GREF»-ի և քույր քաղաքների կոմիտեի միջև նախապատրաստական և ամփոփիչ ժողովների ընթացքում համատեղ կսահմանվի գնահատման կարգ:

ՀՈԴՎԱԾ 8 – Ծրագրի ընդհատումը

Եթե վերը նշված պարտավորություններից որեւէ մեկը չի կատարվում գործընկերներից մեկի կողմից, ապա մյուսները կարող են լուծումներ առաջարկել: Լուրջ և շարունակական պարտավորությունների չկատարման պարագայում՝ սույն համաձայնագիրը կլուծվի՝ օրինական ներկայացուցչի կողմից ստորագրված պատվիրված նամակը բոլոր գործընկերներին ուղարկելով: Անգամ համաձայնագիրն անվավեր կհամարվի, եթե անհրաժեշտ ֆինանսական միջոցներ չստացվեն:

Կնքված է հայերեն և ֆրանսերեն լեզուներով, հավասար իրավաբանական ուժ ունեցող 3 օրինակից:

Քաղաք Ստեփանավան

ամսաթիվ 12.12.2017թ.

Ստեփանավանի
քաղաքապետ՝



Մ. Նարայանյան



Դեսինի քույր-
քաղաքների կոմիտեի
նախագահ՝

Ա. Ժամբոն

«GREF»-ի նախագահ՝

Ժ.-Պ. Կուվելիեր



Comité de Jumelage



CONVENTION

Entre

La municipalité de Stepanavan, province du Lori en Arménie, représentée par son maire, Monsieur M. KARAKECHICHIAN,

ainsi que **le Comité de Jumelage de Décines** (France, département du Rhône), représenté par la présidente, Madame Anna JAMBON d'une part,

et

l'association de solidarité internationale GREF (Groupement des Educateurs sans Frontières) représentée par son président Jean-Pierre CUVELIER d'autre part,

il est convenu ce qui suit :

Article 1- Objet de la convention

La connaissance de la langue et de la culture françaises à Stepanavan et ses villes environnantes doit contribuer au développement des liens qui unissent Stepanavan à Décines.

Dans ce cadre, le GREF propose de se mettre à la disposition de la municipalité de Stepanavan afin de :

- contribuer à la formation continue des enseignants de français pour entretenir leur maîtrise personnelle de la langue française et des méthodes pédagogiques actives
- développer un horizon d'interculturalité franco-arménienne où le patrimoine local de Stepanavan et ses environs sert de support aux activités pédagogiques francophones.

Article 2- Modalités

Un programme triannuel 2017-2020.

Une session par an de 5 semaines.

Deux volontaires du GREF par session.

Chaque session est organisée en fonction d'un événement qui permette de fédérer des forces vives locales dépassant le cadre de l'école (par exemple écoles d'art et de musique, bibliothèque, musée, chemins de randonnée, maison de la culture, ainsi que toute personne ou association intéressées).

Les volontaires du GREF participeront aux enseignements dans les écoles en tant que co-formateurs et organiseront des réunions pédagogiques.

Ces modalités pourront évoluer selon les besoins et les contraintes, notamment financières.

Article 3- Engagement des enseignants

L'ensemble des enseignants de français de Stepanavan et ses villes environnantes s'engage à participer à la totalité des sessions, sous réserve de l'accord des directions de leurs écoles.

Article 4- Engagement du GREF

Le GREF s'engage à rechercher les financements complémentaires nécessaires à la réalisation du projet et mettre à disposition des intervenants compétents.

Article 5- Engagement de la municipalité de Stepanavan

Les volontaires du GREF seront logés gratuitement dans un logement indépendant permettant une vie personnelle autonome.

La municipalité facilitera l'organisation des événements fédérateurs, entre autres en participant au transport des élèves.

Article 6- Engagement du Comité de Jumelage de Décines et de Stepanavan

- à Stepanavan

Le comité de jumelage désignera une personne francophone référente comme interlocutrice directe du GREF. Celle-ci sera chargée de la communication pendant et entre les sessions.

- à Décines

Le comité de jumelage versera 1600 euros par an au GREF pour la réalisation de cette action et contribuera aux frais matériels engendrés par l'organisation des événements à Stepanavan.

Article 7- Evaluation de cette action

Un mode d'évaluation sera décidé en commun lors des réunions de préparation et de bilan entre le GREF et le comité de jumelage.

Article 8- Interruption de cette action

Si l'un ou l'autre des engagements ci-dessus n'était pas tenu par l'un des partenaires, il appartiendrait aux autres de proposer des solutions. En cas de carence grave et persistante, il serait alors mis fin à la présente convention par lettre recommandée signée par le représentant légal et envoyée à tous les partenaires. De même, celle-ci deviendrait caduque si les financements nécessaires n'étaient pas obtenus.

Fait en trois exemplaires originaux en français et en arménien.

A le



Le Maire
de Stepanavan

M. KARAKECHICHIAN



La présidente du Comité
de Jumelage de Décines

A. JAMBON

Le Président
du GREF

J.-P. CUVELIER